

## ՀԱՅՆ ԿԵՆԱՐԱՐ

«Գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,  
այլ ամենայն բանիւ որ ելանէ  
ի բերանոյ Աստուծոյ» (Մտք. Գ 4)

Երկրներում ժամանակ առ ժամանակ հացի պակաս կամ սով է լինում:

Հացի պակասից, սովից դրդուած մարդիկ յայտնում են ծայրաստիճան  
նեղութեանց մէջ եւ երբեմն նոյն իսկ դիմում են աներեւակայելի եւ ան-  
մարդկային քայլերի: Մարդկային ազգի պատմութեան մէջ կան բազմաթիւ  
օրինակներ հացի առատութեան եւ ընդհակառակը հացի քչութեան կամ  
սովի: Այստեղ մենք կ'ուզենք ձեր ուշադրութիւնը հրաւիրել սուրբգրային մի  
քանի հատուածների վրայ եւ մտածել ՀԱՅ հասկացողութեան մասին: Կարո՞ղ  
է արդեօք մարդ արարածը ապրել, կամ կենդանի մնալ առանց հացի, կամ ոչ:  
Եթէ այո, ապա որքա՞ն ժամանակ:

Մտաթեոսի Աւետարանի ԺԳ գլխի մէջ պատմւում է թէ ինչպէս Տէր  
Յիսուս՝ Յովհաննէս Մկրտչի գլխատումից յետոյ, հեռանում է անապատ տեղ  
մարդկային ազգի պղծութիւնը եւ չարութիւնը ողբալու համար: Նրա  
ետեւից բազում ժողովուրդ է գնում: Քրիստոս միփաբում է նրանց  
Աստուծոյ խօսքով եւ կամենում է արձակել: Սակայն իմանալով որ յարատեւ  
մարմնական սնունդ չեն ստացել որոշում է ջամբել նրանց դրանով՝ կենարար  
հացով, որպէս զի չնուաղեն ի նանապարհի: Տէրը կերակրում է մօտ հինգ  
հազար հոգի չհաշուած կանանց եւ երեխաներին:

Ի՞նչ է կամենում մեզ այստեղ սովորեցնել Սուրբ Աւետարանը:  
Քրիստոս՝ Աստուծոյ Գառը, որ մարմին էր առել եւ եկել էր աշխարհ իր  
ժամանակի մէջ՝ Նա է կերակրիչը ամենայնի: Նա է երկնքի եւ երկրի  
Արարիչը, որ նաեւ կերակուր է բաշխում բոլորիս, ինչպէս անապատի  
մէջ, երբ Իսրայէլի ազգը դուրս էր եկել Նգիպտոսից: Անապատ տեղում  
այն հաց չկերաւ, այլ կերաւ մանանայ եւ լորամարգ (Ելից ԺԶ 13-22), ջուր  
խմեց, որ Մովսէսը քիցքեց վեմից (Ելից ԺԷ 1-7, Թուոց Ի 1-13): Սակայն  
ցորենի ալիւրից պատրաստուող «հաց» ասուածը Իսրայէլի ազգը չկերաւ:  
Զարմանալի է որ քառասուն տարիներ շարունակ՝ հացը, որ այսօր  
կարեւոր է մարդու բնութեան համար, մարդ արարածը չհաշակեց:

Մովսէս մարգարէն քառասուն օր ու քառասուն գիշեր լեռան վրայ  
կերակրւում էր Աստուծոյ խօսքով եւ ոչ հացով, այսինքն նա ամբողջապէս  
անսուղ մնաց, ոչ կերաւ եւ ոչ էլ խմեց: Նոյնպէս Նդիա մարգարէն  
քառասուն օր անսուղ մնաց: Նոյն օրինակով մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս

Քրիստոս՝ անապատում ոչ կերաւ եւ ոչ էլ խմեց եւ անսուաղ մնաց։ Անապատում հրեայ ժողովուրդը ոչ միայն «հաց» չկերաւ, այլ նաեւ զգեստների կարիք չունեցաւ, նրանք թեւեւ բոբկառտն էին, սակայն նրանց ոտքերի վրայ վերքեր չբացուեցին եւ ինչպէս ասում են Եկեղեցու հայրերը, նրանք նոյնիսկ զգեստների կարիք չզգացին, որովհետեւ մանուկ հասակից նրանց զգեստները անում էին հասակի հետ, նրանց մարմնի համաձայն։

Երկնքից հաց իջեցրեց ինչպէս մեզ ասում է Աւետարանը. «Եւ եմ երկնքից իջած հացը» (Յովհ. Զ 41)։ Յիսուս ոչ միայն կերակուր պարգեւող, բաշխող է. այլ նաեւ ինքն իսկ ԿԵՐԱԿՈՒՐ է, ՀԱՅ է, որը բաշխում է ի միջի մերում<sup>1</sup> (մեր մէջ) «... եթէ չուտէք մարդու Որդու մարմինը եւ չըմպէք նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ։ Ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի...» (Յովհ. Զ 54, 55)։ Ուրեմն հին Իսրայէլը թեւեւ կերաւ մանանան՝ երկնքից իջած հացը, սակայն երկնքի արքայութիւն չմտաւ, բայց մենք, որ Քրիստոսի թանկ արեամբ ենք գնուած եւ Քրիստոսի փրկագործութիւնը՝ ինչպէս քաջապէս գիտենք, Գողգոթա լեռան վրայ է տեղի ունեցել, իսկ մենք էլ այժմ գտնուում ենք երկրորդ Գողգոթայի վրայ, ուր Նա թափեց Իր կենարար արիւնը եւ մեզ յաւիտենական կեանք պարգեւեց<sup>2</sup>, ուտում ենք երկնային հացից եւ արժանանում երկնային արքայութեան։ Հաւատում ենք Քրիստոսի խաչելութեան մեծ խորհրդին եւ դառնում արքայութեան որդիներ։

Սիրելի հաւատացեալներ, մանուկը երբ դեռ իր մօր արգանդում է, ինն ամիս նա եւս հացով չի սնոււմ, այլ իր սնունդն է առնում հարազատ մօր մարմնից պորտալարով։ Ժողովրդի մէջ գեղեցիկ մի խօսք կայ՝ թէ երբ Աստուած մէկ դուռը փակում է, երկու դռներ է բացում։ Ուրեմն երբ մանուկը ծնում՝ աշխարհ է գալիս, նրա պորտալարը փակւում է, եւ բացւում են մօր երկու ստինքները, որոնցից նա կերկրւում է։

Եւ ի վերջոյ ասեմք, որ յարութեան ժամանակ, յարուցեալ մարմնով մենք այս երկրաւոր հացը չէ որ պէտք է ուտեմք, այլ երկնային եւ անպատում կերակուր, որն է երկնաւոր կերակուրը։ Երկնաւոր կերակուրը այլ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ խօսքը, Աստուծոյ բանը, որով սնոււմ են երկնքի արքայութեան հրեշտակները։

<sup>1</sup> Պատարագամատոյց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ 1956, էջ 112։

<sup>2</sup> Այս մասին խօսեցինք մեր կիրակնօրեայ քարոզի մէջ ի Ս. Յարութեան Տաճարի, յերկրորդ Հայոց Գողգոթայ յաւուր Սուրբ եւ Անմահ Պատարագի։

Յիսուս աղօթքով բազմացրեց հացը: Աղօթքի գորութեան մասին կայ մի հետաքրքիր պատմութիւն<sup>3</sup>, որը պատմում է, թէ ինչպէս մի վանահայր հրաման է ստանում թագաւորից թէ վանքը տուրք պէտք է վճարի: Վանահայրը հաւաքելով իր միաբանութիւնը տեղեակ է պահում նրանց թագաւորի հրամանի մասին եւ պատուիրում է միաբանութեանը երկու շաբաթ յարատեւ պահել պահել եւ աղօթել, իսկ ինքը խոստանում է գնալ թագաւորի մօտ եւ նրանից խնդրել մի նոր հրամանագիր, որով վանքը կ'ազատուի տուրքերից: Սակայն վանահայրը իր խցից ոչ մի տեղ չի գնում, այլ իր խցի մէջ բոլորի հետ մէկտեղ աղօթում է: Նղբայրները, ի տես այս ամէնի, սկսում են տրտնջալ, թէ այս ինչ է, վանահայրը վանքից ոչ մի տեղ չի հեռանում, այլ իր խցի մէջ է փակուած՝ փոխանակ թագաւորին գնալու: Սակայն երբ լրանում է տասնչորսերորդ օրը եւ մտնում են տասնհինգերորդ օրուայ մէջ, վանահայրը հաւաքում է միաբանութիւնը եւ ցոյց է տալիս նրանց թագաւորի կնիքով կնքուած նոր հրամանագիրը, որով վանքը ազատւում է տուրքերից: Նղբայրները զարմանքով հարցնում են թէ. «Ո՛վ հայր, ինչպէ՞ս յաջողուեց սա»: Եւ վանահայրը խոնարհաբար պատմում է թէ ինչպէս մի գիշերուայ մէջ, նրան Աստուծոյ հրամանով հրեշտակները տարել են թագաւորի մօտ, նա տեսել էր թագաւորին, յետոյ տեղափոխուել էր Ալեքսանդրիա գրագիրների մօտ, ուր խմբագրել եւ կնքել էին մի նոր հրամանագիր, որով վանքը ազատ էր կացուցուել տուրքերից:

Սիրելի հաւատացեալներ, հաւատամք աղօթքի գորութեանը, միշտ սիրով յաճախեմք Եկեղեցի, աղօթեմք առ Աստուած, «զի ամենայն տուրք բարիք, եւ ամենայն պարգեւք կատարեալք, ի վերուստ են իջեալք ի Հօրէն Լուսոյ»<sup>4</sup>: Այսպիսով նաեւ Յիսուս՝ Աստուծոյ խօսքը, Աստուծոյ բանը երկնքից իջաւ երկիր եւ սնում է մեզ Աստուծոյ խօսքով թէ՛ Եկեղեցու մէջ, եւ թէ կերակրում իր մարմնով եւ արեամբ, ու դրանցով իսկ մեզ շնորք է պարգեւում եւ մեղաց թողութիւն:

Շնորհիվ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ մեզ եւ ընդ ամենեւեանս. Ամէն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱՅՂ. ԱԹԱԶԱՆԵԱՆ

Konrad Hoyer (1906-1981)

<sup>3</sup> Остечник Проповедника, Игумен Марк Лозинский, Свято-Троицкая Сергиева Лавра, 1997, #484, стр. 258.

<sup>4</sup> Պատարագամատոյց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ՝ 1956, էջ 128: